ԿԱՐԾԻՔ

(պաշտոնական ընդդիմախոսի)

ԻԳ.00.01 - **«Քաղաքական գիտության տեսություն»** մասնագիտությամբ, քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, **Փայլակ Աշոտի Ենգոյանի՝ ««Փափուկ ուժի» գործոնը Չինաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգում»** թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ժամանակակից աշխարհի բազմաթիվ պետությունների արտաքին քաղաքական հայեցակարգերում ընդգրկված և լայնորեն կիրառվող «փափուկ ուժի» քաղաքականության էության և բովանդակության վերլուծությունը կարելի է համարել քաղաքագիտության ամենաարդիական ուղղություններից մեկը:

Վերջին տասնամյակներում «փափուկ ուժի» կիրառման ուղղությամբ իր առանձնահատուկ մոտեցումն է ցուցաբերում նաև Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը (ՉԺՀ): Անշուշտ, արտաքին քաղաքական նման գործողությունների համար անհրաժեշտ է ապահովել նաև որոշակի նյութատեխնիկական բազա, որն էլ հնարավոր դարձավ ՉԺՀ աննախադեպ տնտեսական աճի արդյունքում:

Ատենախոսության **նպատակներն ու խնդիրները** գիտական են: Ատենախոսը հասարակական-քաղաքական մտքի և հայեցակարգերի շրջանակներում գիտական մակարդակով ուսումնասիրել և վերլուծել է Չինաստանի արտաքին քաղաքականության ռազմավարության շրջանակներում «փափուկ ուժի» կիրառման տեսական-հայեցակարգային հիմնավորումը՝ հաշվի առնելով համաշխարհային քաղաքականության մեջ երկրի ազդեցության աճը:

Հեղինակը վերլուծել է «փափուկ ուժ» հասկացության էությունը ժամանակակից քաղաքական գիտության մեջ, բացահայտել և գնահատել է «փափուկ ուժի» քաղաքականության ժամանակակից գործիքակազմի արդյունավետությունը, հետազոտել է Չինաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգի փոխակերպման նախադրյալներն ու առանձնացրել դրա ժամանակակից մեկնաբանությունը: Այս մոտեցումը հնարավորություն է տվել բացահայտել «փափուկ ուժի» քաղաքականության տեղն ու դերը, ինչպես նաև դրա հայեցակարգային հիմնավորման եղանակները Չինաստանի արտաքին քաղաքական ռազմավարության մեջ:

Հարկ է դրական գնահատել այն, որ տեսական հետազոտության արդյունքները առարկայացած են քաղաքական գործընթացների վերլուծությամբ: Մասնավորապես վերլուծվել է Չինաստանի «փափուկ ուժի» քաղաքականությունը «խելամիտ ուժի» կիրառման վրա հիմնված քաղաքականության փոխակերպելու գործընթացը: Այդ

կապակցությամբ հետազոտվել է «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությունը՝ որպես Չինաստանի կողմից առաջարկված «ընդհանուր ճակատագրի հանրույթի» գաղափարի նյութական, ֆիզիկական հիմք: Միաժամանակ ներկայացվել է այդ գլոբալ նախագծի բովանդակությունը՝ անդրադարձ կատարելով նաև Հարավային Կովկասի տարածաշրջանին:

Գնահատելի է նաև այն, որ Ատենախոսը որոշակի անդրադարձ է կատարել Հայաստանի Հանրապետության կողմից «փափուկ ուժի» քաղաքականության կիրառման հայեցակարգային սկզբունքներին: Այդ առումով, հեղինակը բացահայտել է Չինաստանի «փափուկ ուժի» կիրառման այն միջոցներն ու ձևերը, որոնք, ելնելով հայ և չինացի ժողովուրդների մշակութային-քաղաքակրթական ընդհանրությունից, կարող են պահանջված լինել Հայաստանի արտաքին քաղաքական գործունեության մեջ:

Ցանկացած ատենախոսության արժևորման առաջնային չափանիշը **գիտական նորույթի** առկայությունն է: Հատկանշական է, որ դա պայմանավորված է «փափուկ ուժի» քաղաքականությունը՝ որպես և՛ արտաքին քաղաքական, և՛ ներքին խնդիրների լուծման միջոց կիրառելու հարցում ՉԺՀ-ի փորձի ընդհանրացման անհրաժեշտությամբ:

Չինաստանի «փափուկ ուժի» քաղաքականությունը Ատենախոսը ներկայացնում է որպես պատմական առումով հարաբերականորեն կարճ ժամանակահատվածում զգալի փոխակերպումների ենթարկված ՉԺՀ արտաքին քաղաքական հայեցակարգի բաղադրիչ, որը հնարավոր դարձավ տնտեսական ոլորտում արձանագրված հաջողությունների պայմաններում: Հեղինակի կարծիքով՝ «փափուկ ուժի» քաղաքականության համատեքստում այդ հզոր նյութական բազան Չինաստանը համադրում է երկրի ավանդական քաղաքակրթության յուրօրինակության և գրավչության քարոզչության հետ՝ երբեմն հանդես գալով որպես գլոբալ զարգացման այլընտրանքային հարացույց:

Փ. Ենգոյանին հաջողվել է համակողմանի վերլուծության ենթարկել Չինաստանի «փափուկ ուժի» քաղաքականության բովանդակությունը՝ շեշտադրելով դրա մշակութային-արժեքային բաղադրիչը, որը հնարավորություն կտա Չինաստանին ներկայանալ համաշխարհային հանրությանը իբրև ժամանակակից և գրավիչ բևեռ: Հատուկ ուշադրություն է դարձվում «առանցքային արժեքներին», որոնք, ըստ հեղինակի, հենվում են կոնֆուցիական բարոյագիտության և հասարակության մասին ուսմունքի վրա, որում առկա են պարտքի, արդարության, բարոյականության ու պատասխանատվության մասին իդեալները: Դրանք ուղղված են չինական ազգի հոգևոր դաստիարակությանը, ինչը ենթադրում է հայրենասիրության և կոլեկտիվիզմի զարգացում, ազգային ինքնահարգանքի, ինքնավստահության ու հպարտության ամրապնդում, ժողովրդի հայրենասիրական ոգևորության (էնտուզիազմ) վերածում պրակտիկ գործողությունների՝ ուղղված Չինաստանի բարգավաճմանը:

Հատկանշական է, որ «փափուկ ուժի» քաղաքականությունը Ատենախոսը դիտարկում է ոչ միայն որպես արտաքին քաղաքական խնդիրների լուծման միջոց, այլև որպես «դեպի ներս» ուղղված քաղաքականություն՝ օգտագործելով մշակութային-քաղաքակրթական լծակներ, որոնք նպատակաուղղված են սեփական ժողովրդի ինքնության պահպանմանը ինչպես պետության ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս: Կարծում ենք, որ այս ուղղությամբ Չինաստանի կուտակած փորձը կարող է ուսանելի լինել բազմաթիվ այլ երկրների համար:

Ատենախոսը ներկայացրել է «փափուկ ուժի» քաղաքականության չինական և արևմտյան մոդելների գործիքակազմերի տարբերությունը. մասնավորապես, Չինաստանը մերժում է իր սոցիալ-քաղաքական չափանիշները այլ պետություններին պարտադրելու գործելակերպը՝ նրանց տարածքում որոշակի քաղաքական ուղղվածությամբ հասարակական կազմակերպություններ ստեղծելու միջոցով: Աշխատանքում մատնանշվում է Չինաստանի ձգտումը՝ հիմնավորելու համաշխարհային զարգացման տնտեսական, մշակութային-քաղաքակրթական այն առաջնահերթությունները, որոնք ուղղված են ոչ թե ժողովուրդներին բաժանելուն, այլ նրանց համախմբելուն՝ հիմնվելով ժամանակակից աշխարհի՝ իբրև «ընդհանուր ճակատագրերի» հանրույթի ընկալման վրա:

Ըստ Փ. Ենգոյանի՝ չինական ռազմավարական մշակույթի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նախապատվությունը տրվում է ճկուն քաղաքականությանը, ինչը դրսևորվում է ազդեցության տարածման «ուղղակի» և «անուղղակի» եղանակների զուգակցմամբ՝ հակառակորդից միշտ մեկ քայլ առաջ լինելու և հաջողության հասնելու համար նվազագույն ռեսուրսներ օգտագործելու նպատակով: Ատենախոսի արդարացի պնդմամբ, Չինաստանի ղեկավարները հասկանում են, որ հնարավոր չէ երկիրը վերածել գլոբալ, համաշխարհային բևեռի առանց խոշորագույն տարածաշրջանային կենտրոն դառնալու: Այդ իսկ պատճառով վերջին տասնամյակների ընթացքում Չինաստանը սկսել է ակտիվություն դրսևորել կարևորագույն արտաքին քաղաքական նպատակների իրագործման հարցում՝ տարածաշրջանային և ենթատարածաշրջանային համագործակցության խորացում, եվրասիական տարածաշրջանի երկրների հետ տնտեսական ինտեգրման աշխուժացում և այլն:

Չինաստանի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագիծը Հեղինակը վերլուծել է հայեցակարգային տեսանկյունից, բնութագրելով այն որպես «խելամիտ ուժի» քաղաքականություն՝ ինչպես փափուկ, այնպես էլ կոշտ լծակների կիրառմամբ, ուղղված ոչ միայն հաղորդակցությունների և ենթակառուցվածքների ցանցի բարելավմանը, այլև տարածաշրջանային և, որպես հետևանք, գլոբալ կայունության հաստատմանը, ժողովուրդների ներդաշնակ զարգացման համար սոցիալ-մշակութային պայմանների ստեղծմանը: Այս առումով, Հեղինակի կողմից կատարվել է նաև հարավկովկասյան հանրապետություններում «փափուկ ուժի» քաղաքականության իրականացման հարցում

Չինաստանի մոտեցումների համեմատական վերլուծություն, բացահայտվել են այդ երկրներից յուրաքանչյուրի հետ տարվող քաղաքականության առաջնահերթությունները:

Շատ կարևոր է, որ այս ամենի հետ մեկտեղ հեղինակի տեսադաշտից դուրս չեն մնացել Հայաստանի հետ առնչվող խնդիրները: Ատենախոսը ներկայացրել է սեփական տեսլականը «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծում ՀՀ ընդգրկվածության վերաբերյալ, ինչպես նաև, վերլուծելով հայկական և չինական հնագույն քաղաքակրթությունների մշակութային-քաղաքակրթական հիմքերը, որոնցում ավանդույթը, համայնքային-պահպանողական մոտեցումները յուրօրինակ կերպով համատեղվում են նորարարության և անհատականության դրսևորումների հետ, ներկայացրել է Չինաստանի «փափուկ ուժի» քաղաքականության այն գործիքները, որոնք կարող են կիրառվել Հայաստանի արտաքին քաղաքական ռազմավարության մեջ:

Արժևորման է ենթակա նաև այն, որ Ատենախոսը փորձել է նորովի պարզաբանել քաղաքական տեսության այն հասկացություններն, որոնց անդրադարձ է կատարվել աշխատանքում: Միաժամանակ Հեղինակին հաջողվել է ընդհանուր գծերով բացահայտել այն մոտեցումները, որոնք ազդում են «փափուկ ուժի» քաղաքականության չինական մոդելի վրա: Այսպես, քաղաքագիտական թարմ մոտեցումների հիման վրա հեղինակը ներկայացրել է «փափուկ ուժի» քաղաքականության հայեցակարգային հիմքերը և ձևակերպել իր առաջարկություններն ու եզրահանգումները:

Հետազոտությունն ունի հարուստ գիտական և աղբյուրագիտական հենք: Օգտագործվել են ժամանակակից ընդհանրացնող աշխատություններ, գիտական մենագրություններ, հրապարակված փաստաթղթեր: Ակադեմիական խոսույթում «փափուկ ուժի» քաղաքականությանն առնչվող քաղաքական գործընթացների շուրջ առկա մոտեցումների ուսումնասիրման նպատակով օգտագործվել են տարբեր երկրների ակադեմիական հաստատությունների և ուղեղային կենտրոնների ներկայացուցիչների հետազոտական նյութերը:

Ատենախոսությունը աչքի է ընկնում թեմայի ուսումնասիրման տեսական խորությամբ, ձևակերպված նպատակների և խնդիրների տրամաբանական և հետևողական շարադրմամբ, փաստարկված ընդհանրացումներով և եզրակացություններով: Հեղինակը հետազոտության ընթացքում դրսևորել է մեթոդաբանական համարժեք մոտեցում՝ կիրառելով գիտական հետազոտության և քաղաքագիտության ընդհանուր և առանձնահատուկ մեթոդներն ու եղանակները:

Առնչվելով մեծ ծավալի նյութի հետ՝ Ատենախոսը կարողացել է պահանջվող մակարդակով կիրառել գիտահետազոտական աշխատանքներին առաջադրվող տեղեկատվության վերամշակման ու ընդհանրացման սկզբունքները, ինչը վկայում է այն մասին, որ Փայլակ Ենգոյանը մասնագիտական պահանջվող գիտելիքներ ու անհրաժեշտ պատրաստվածություն ունեցող մասնագետ-հետազոտող է:

Այսուհանդերձ, ատենախոսությունը զերծ չէ նաև որոշակի թերություններից և բացթողումներից, որոնցից ցանկանում ենք նշել հետևյալները՝

1. Աշխատանքը մեծապես կշահեր, եթե հեղինակը հետազոտության շրջանակներում չինացի և հայ հետազոտողների շրջանակներում իրականացներ փորձագիտական հարցում, ինչը թույլ կտար առավել բազմակողմանի բացահայտել Չինաստանի արտաքին քաղաքականության մեջ փափուկ ուժի կիրառման դրսևորումները, գործիքներն ու առանձնահատկությունները և առավել բարձրացնել ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը:
2. Ատենախոսության մեջ փաստացի անդրադարձ չի կատարվել խնդրո առարկա թեմայի շրջանակներում ուղեղային կենտրոնների դերակատարության հարցին: Այս առումով, պետք է նշել, որ 21-րդ դարում վերջիններս դարձել են ոչ միայն ինքնատիպ ինտելեկտուալ հարթակներ՝ նման հարցերի ուսումնասիրության և այդ ոլորտում ռազմավարական գաղափարներ գեներացնելու և մշակումներ պատրաստելու համար, այլև շատ դեպքերում վերածվել են ներքին ու արտաքին քաղաքականության ակտիվ դերակատարների և պետության փափուկ ուժի տարածման ու հանրային ընկալման մեջ կայացված որոշումների կամ իրականացվող քաղաքականության լեգիտիմության ապահովման ազդեցիկ գործիքների: Վերոնշյալը ուղղակիորեն և հատկապես վերաբերում է նաև Չինաստանին: Հատկանշական է, որ դեռևս 2015 թ. փետրվարին հատուկ շրջաբերականով ՉԺՀ-ի նախագահ Սի Ծինփինը կոչ է արել զարգացնելու գլոբալ ազդեցության «նոր տեսակի» չինական ուղեղային կենտրոնները և խթանելու ինտելեկտուալ հանրության ներուժը քաղաքականության խորհրդատվության բնագավառում: Չինաստանի նախագահի խոսքով ուղեղային կենտրոններն ազգային փափուկ ուժի կարևոր բաղադրիչն են: Ավելի վաղ՝ 2014 թ. հոկտեմբերին, Ընդհանուր բարեփոխումների առաջատար խմբի 6-րդ հանդիպմանը ՉԺՀ-ի նախագահը նշել էր, որ երկրի ուղեղային կենտրոնները պետք է օժտված լինեն «չինական առանձնահատկություններով», առաջ մղեն Չինաստանի արդիականացումը և կառավարման համակարգը և ամրապնդեն Չինաստանի փափուկ ուժը [տե՛ս Աթոյան Վ., *Ուղեղային կենտրոններ. ռազմավարական գաղափարների դարբնոցները*, Եր., «Զանգակ», 2019, էջ 128-130]: Այս առումով, հետաքրքրական նաև Շանհայի Սոցիալական գիտությունների ակադեմիայի (SASS) Տնտեսական հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրեն Քուան Հենգի (Quan Heng) դիտարկումը, ըստ որի՝ Չինաստանում նման կառույցների ստեղծումը կապահովի ազգային և տնտեսական անվտանգությունը, կբարելավի ազգային կառավարման

համակարգը և արդիականացումը, առաջ կմղի նորաստեղծական և զարգացման քաղաքականությունները և առավել ընդհանրական առումով կամրապնդի Չինաստանի ազգային կերպարը և փափուկ ուժը [տե՛ս Աթոյան Վ., Մովսիսյան Շ., *Չինաստանի ուղեղային կենտրոնները*, Եր., Տնտեսագետ, 2016, էջ 27 («Ամբերդ» մատենաշար)]:

3. Աշխատանքի «Ներածություն» բաժնում «Ատենախոսության գիտական նորույթը» խորագրի 6-րդ կետում (էջ 13) հեղինակը նշում է. «Կատարվում է հարավկովկասյան հանրապետություններում «փափուկ ուժի» քաղաքականության իրականացման հարցում Չինաստանի մոտեցումների համեմատական վերլուծություն, բացահայտվում են այդ երկրներից յուրաքանչյուրի հետ տարվող քաղաքականության առաջնահերթությունները, կանխատեսվում են Չինաստանի հետ նրանց մերձեցման հեռանկարները, ինչպես նաև նրանց մասնակցությունը ենթակառուցվածքային ծրագրերին»: Այս առումով, մեծապես ցանկալի կլիներ ատենախոսության մեջ առավել հանգամանալից անդրադարձ տեսնել վերջին տարիներիներին խնդրո առակա հարցի և մասնավորապես Չինաստանի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» գլոբալ նախագծի տարբեր ասպեկտների վերաբերյալ հայաստանցի հետազոտողների հրապարակումներին և տրված փորձագիտական գնահատականներին: Օրինակ, 2021 թվականին ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնը հրապարակել էր 118 էջ ծավալով՝ «Հայաստան-Չինաստան տնտեսական համագործակցության հեռանկարները «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծի շրջանակներում» հետազոտությունը [տե՛ս Աթոյան Վ., Հովսեփյան Մ., Առուստամյան Տ., Պետրոսյան Ն., *Հայաստան-Չինաստան տնտեսական համագործակցության հեռանկարները «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծի շրջանակներում*, Եր., Տնտեսագետ, 2021, 118 էջ, («Ամբերդ» մատենաշար 49): DOI: 10.52174/978-9939-61-239-3]:

4. Ատենախոսության մեջ առկա են նաև փաստական, ժամանակագրական անորոշություններ և/կամ վրիպակներ, ինչպես նաև երկրորդային աղբյուրներից և գործողությունը դադարեցված ռազմավարականն բնույթի փաստաթղթի վրա հղումներ: Այսպես,

   - Ատենախոսության առաջին գլխում (էջ 47) Հեղինակը նշում է, որ 2006 թ. մասնակցելով ԱՄՆ նախագահական արշավին Հիլարի Քլինթոնը Ռազմավարական և միջազգային հետազոտությունների կենտրոնում հիմնեց «Խելամիտ ուժի հարցով հանձնաժողովը» (CSIS Commission on smart power): Հաշվի առնելով, որ այս հատվածի վրա որևէ հղում առկա չէ՝

ցանկալի կլիներ որոշակիորեն պարզաբանել այն աղբյուրն, ըստ որի վերոնշյալ հանձնաժողովը ստեղծվել է հենց Հիլարի Քլինթոնի կողմից կամ նրա նախաձեռնությամբ: Բացի այդ, հայտնի է, որ 2006 թվականի ԱՄՆ-ում նախագահական ընտրությունները տեղի չեն ունեցել, իսկ Հ. Քլինթոնը ԱՄՆ դեմոկրատական կուսակցության կողմից որպես նախագահի թեկնածու առաջադրվել է ոչ թե 2006, այլ 2016 թվականին:

- Ատենախոսության առաջին գլխում (էջ 50-51) Հեղինակը խոսելով արդի փուլում ԱՄՆ-ի «խելամիտ ուժի» հատուկ ըմբռնման մասին՝ ԱՄՆ-ի 45-րդ նախագահ Դոնալդ Թրամփի և նրա քաղաքականությունը վերլուծում է ներկա ժամանակով, այնինչ արդեն շուրջ երկու տարի է, որ այդ երկիրը այլ ղեկավար ունի:
- Ատենախոսության առաջին գլխում (էջ 60), «փափուկ ուժի» վերաբերյալ ՌԴ մոտեցումները ներկայացնելիս, Հեղինակը մատնանշում է և քննարկում՝ 2013 թվականին ընդունված «ՌԴ արտաքին քաղաքականության հայեցակարգը»: Այս համատեքստում հարկ է նկատել, որ նշված փաստաթուղթը դադարել է գործել դեռ 2016 թվականին, երբ ընդունվել է ՌԴ արտաքին քաղաքականության նոր հայեցակարգ: Ուստի առավել գործնական կլիներ հարցը քննարկել այս պահին գործող հայեցակարգի համատեքստում: Ավելորդ չէ նկատել, որ ներկայումս կրկին նախատեսվում է ընդունել նոր հայեցակարգ:
- Ատենախոսության երկրորդ գլխում (էջ 74) հեղինակը ներկայացնում է ամերիկյան հայտնի և թերևս աշխարհի ամենախոշոր ուղեղային կենտրոնի՝ RAND կորպորացիայի վերլուծաբանների կարծիքը Չինաստանի ապագայի վերաբերյալ՝ հղում կատարելով ռուսական «Регнум» լրատվական գործակալության կայքէջում Ալեքսանդր Զապոլսկիսի համապատասխան հոդվածին: Կարծում ենք հետազոտական աշխատանք կատարելու ընթացքում առավել տեղին կլիներ ծանոթանալ և հղում կատարել հենց սկզբնաղբյուր հանդիսացող հրապարակմանը:

5. Ատենախոսության Երրորդ գլխում (էջ 140) հեղինակը նշում է հետևյալը. «ՀՀ ազգային շահերն առաջ մղելու գործում առանձնահատուկ ներդրում է ունեցել հայկական լոբբին, որը ձևավորվել է հիմնականում սփյուռքի շնորհիվ և, փորձագետների գնահատականներով, հզորությամբ աշխարհում երկրորդն է՝ զիջելով միայն հրեականին»: Մի կողմ թողնելով հայկական լոբբիի՝ աշխարհում ազդեցությամբ երկրորդը լինելու վերաբերյալ պնդման արդարացիության հարցը, որի վերաբերյալ գնահատականները կարող են տարբեր լինել, կարծում ենք տեղին կլիներ համապատասխան հղում կատարել և մատնանշել այդ

փորձագետների աշխատանքը կամ աշխատանքները, որոնցում նման պնդումն առկա է: Ըստ էության, նույնատիպ խնդիր է նույն հարցի շարունակության մեջ (էջ 142), որտեղ Հեղինակը նշում է, որ ԱՄՆ-ում հայ համայնքի թվաքանակը երկու միլիոն է: Հաշվի առնելով, որ այս թիվը նույնպես վիճելի է՝ ցանկալի կլիներ հղում արվեր որևէ արժանահավատ աղբյուրի վրա:

Այնուամենայնիվ, վերը նշված դիտողությունները էականորեն չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը: Ատենախոսության եզրահանգումները գիտական են և քաղաքական գիտությունների համար արժեքավոր: Աշխատանքի բոլոր հատվածներում առկա են թարմ և արժանահավատ գնահատականներ և համեմատություններ: Ատենախոսության շարադրման ոճը համապատասխանում է պահանջվող մակարդակին: Աշխատանքն աչքի է ընկնում հետազոտական հիմնահարցերի շարադրման հետևողականությամբ ու տրամաբանական հաջորդականությամբ: Համապատասխան եզրահանգումներն ու սկզբունքային հիմնադրույթները հայեցակարգային բնույթի են: Ատենախոսությունում արծարծված բոլոր հինախնդիրները, արված եզրակացությունները և գիտական նորույթ պարունակող հիմնական դրույթները արտացոլված են Հեղինակի հրատարակած հոդվածներում:

Ելնելով վերոհիշյալ հանգամանքներից գտնում եմ, որ **ԻԳ.00.01 - «Քաղաքական գիտության տեսություն»** մասնագիտությամբ, քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար **Փայլակ Աշոտի Ենգոյանի ««Փափուկ ուժի» գործոնը Չինաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգում»** թեմայով ատենախոսությունը համապատասխանում է քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ատենախոսություններին առաջադրվող պահանջներին:

ՀՊՏՀ հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ,
քաղ.գ.դ., դոցենտ

Վ. Աթոյան

Քաղաքական գիտ. դոկտոր Վ. Աթոյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՊՏՀ գիտական քարտուղար

Ն. Դարբինյան

«25» 08 2022 թ.